



1. Ծանոթագրություն

- ՀՀ կրթության և գիտության, ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարություններ – Մրցույթն իրականացվում է Հայաստանում ՀՀ կրթության և գիտության, Արցախում՝ ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարությունների հովանու ներքո (www.edu.am, edu.nkr.am):
- «Այբ» կրթական հիմնադրամ – Պաշտոնական կազմակերպիչը Հայաստանում և Արցախում (Երևան 0009, Կոռյունի 19ա, 54-37-07, kangaroo@ayb.am, www.kangaroo.am, www.ayb.am):
- «Կենգուրու առանց սահմանների» միջազգային ընկերակցություն (KSF) – Կազմակերպիչը ողջ աշխարհում (կենտրոնական գրասենյակը գտնվում է Փարիզում, www.math-ksf.org):
- Մարզային համակարգողներ – Մարզերում մրցույթի կազմակերպման համար «Այբ» հիմնադրամի պատասխանատուներ: Բոլոր հարցերով անմիջապես դիմեք նրանց: Համակարգողների տվյալները տրված են www.kangaroo.am կայքում և մրցույթի իրազեկման կյուբերում:
- Դպրոց – «Կենգուրու» մրցույթին մասնակցության հայտ ներկայացրած հանրակրթական հաստատություն:
- Գործընկեր դպրոց – Այն դպրոցը, որի մասնակից աշակերտների թիվը մեծ է 5-ից, բայց պակաս է 40-ից, և որը մրցույթի օրը միանալու է այլ դպրոցի:
- Դպրոցի պատասխանատու – Դպրոցի կողմից լիազորված աշխատակից, ով կհամակարգի դպրոցում մրցույթի անցկացման հետ կապված բոլոր աշխատանքները: «Այբ»-ը և մարզային համակարգողները կապ կպահպանեն անմիջապես դպրոցի պատասխանատուի հետ:
- Տարածքային կենտրոններ – Կենտրոններ, որոնք գործելու են միայն մրցույթի օրը գրեթե բոլոր քաղաքային համայնքներում: Այս կենտրոններից դպրոցի պատասխանատուները առավոտյան կվերցնեն մրցութային փաթեթները և այնտեղ էլ մրցույթի ավարտից հետո կհանձնեն պատասխանների թերթիկներով փաթեթները: Տարածքային կենտրոնների ցանկը տրվում է www.kangaroo.am կայքում, ինչպես նաև տրամադրվում է մարզային համակարգողների կողմից:
- Դպրոցի դիտորդներ – Դպրոցի կողմից լիազորված անձինք (այդ թվում՝ նաև ծնողներ), ովքեր կհետևեն մրցույթի կանոնների պահպանմանն իրենց իսկ դպրոցում: Յուրաքանչյուր դպրոցում պետք է լինի առնվազն երկու դիտորդ: Միևնույն ժամանակ պետք է ապահովվի առնվազն մեկական դիտորդի ներկայությունը յուրաքանչյուր դասասենյակում, եթե մրցույթը դպրոցում իրականացվում է ոչ թե մեկ, այլ մի քանի դասասենյակում:
- «Այբ»-ի դիտորդներ – «Այբ» հիմնադրամի կողմից լիազորված անձինք, ովքեր մրցույթի օրը կայցելեն մի շարք դպրոցներ՝ կամայական ընտրությամբ, և կհետևեն մրցույթի կանոնների պահպանմանը:
- Մասնակիցներ – Դպրոցի 3-12-րդ դասարանցիներ, ովքեր մինչև հայտարարված վերջնաժամկետը գրանցվել են իրենց դպրոցի մասնակիցների ցանկում՝ ներկայացնելով վճարման անդորրագրերը:
- Հուշանվերներ – Մրցույթի օրը բոլոր մասնակիցներին տրվող փոքրիկ նվերներ:
- Մրցանակներ – Տրվում են լավագույն արդյունքներ ցուցաբերած մասնակիցներին: Լավագույն արդյունք է համարվում 3-4-րդ դասարանցիների համար 64-90 միավորը հնարավոր 96-ից, 5-12-րդ դասարանցիների համար՝ 80-114 միավորը հնարավոր 120-ից:
- Մրցույթի հաղթողներ – 3-4-րդ դասարանցիներ, ովքեր հավաքել են 91-96 միավոր, կամ 5-12-րդ դասարանցիներ, ովքեր հավաքել են 115-120 միավոր:

- **Մրցույթի մասնակցության հայտ** – Դպրոցի կողմից լրացված և մինչև հայտարարված վերջնաժամկետը «Այբ» ներկայացված հայտ: Դպրոցը կմասնակցի մրցույթին միայն նշված ժամկետում հայտը ներկայացնելու դեպքում: Հայտին պետք է պարտադիր կցվեն մասնակիցների ցանկը և վճարման անդորրագրերը: Եթե դպրոցում մասնակիցների թիվը պակաս է 5-ից, տվյալ դպրոցը մասնակցության հայտ ներկայացնել չի կարող:
- **Մասնակիցների ցանկ** – Մասնակից երեխաների ցանկ, որը լրացվում է դպրոցում «Այբ»-ի կողմից տրամադրված հատուկ xls ֆայլում: Ցանկում ներառվում են մրցույթին մասնակցել ցանկացող բոլոր երեխաները, ովքեր ներկայացրել են մասնակցության վճարի բանկային անդորրագրերը: Մասնակիցների ցանկի տպագիր տարբերակը ներկայացվում է հայտի հետ, իսկ էլեկտրոնայինը՝ պարտադիր ուղարկվում kangaroo@ayb.am էլ. հասցեին:
- **Մրցութային փաթեթ** – Մրցույթի օրը դպրոցների պատասխանատուներին տարածքային կենտրոններից տրվող փաթեթ, որը ներառում է խնդիրների տարբերակները՝ ըստ տարիքային խմբերի, պատասխանների լրացման թերթիկները, դպրոցի մասնակից աշակերտների ցանկը, դպրոցի համար մրցութային օրվա ուղեցույցը և հուշանվերները: Դպրոցի ծածկագիրը փակցված է փաթեթի վրա, իսկ դպրոցի կողմից լրացվող արձանագրությունը՝ պատասխանների թերթիկների ծրարի վրա:
- **Դպրոցի ծածկագիր** – Դպրոցին «Այբ»-ի կողմից շնորհվող թվային անփոփոխ ծածկագիր (բոլոր տարիների համար), որը կարող եք գտնել www.kangaroo.am կայքում կամ իմանալ մարզային համակարգողներից: Այս ծածկագիրը երեխաները պարտադիր պետք է գրեն պատասխանների լրացման իրենց թերթիկների վրա:
- **Մասնակցի հերթական համար** – Մասնակիցների վերջնական ցանկում երեխայի հերթական համարը: Փաստացի մասնակիցների վերջնական ցանկը ճշգրտվում է բուն մրցույթի ընթացքում «Այբ»-ից ստացված ցանկի հիման վրա, և ավարտից հետո հանձնվում է տարածքային կենտրոն: Այս համարով և դպրոցի ծածկագրով է համակարգիչը հասկանալու, թե ում է պատկանում տվյալ աշխատանքը:

2. Մրցույթի մասնակիցները

- 2.1. Մրցույթի հիմնական նպատակը դպրոցականների ամենալայն շրջանում մաթեմատիկայի հանդեպ հետաքրքրության խթանումն է, ուստի կարող են մասնակցել 3-12-րդ դասարանցի բոլոր ցանկացողները: **Որևէ նախնական ընտրություն կատարելը, որևէ երեխայի կամքին հակառակ՝ նրան մրցույթին մասնակցելուց զրկելը կամ որևէ կերպով նրա մասնակցությանը խոչընդոտելը դեմ են «Կենգուրու» մրցույթի սկզբունքներին և անընդունելի են:**
- 2.2. Ովքեր կարող են մասնակցել մրցույթին.
 - 3-12-րդ դասարանի աշակերտներ այն դպրոցից, որը մասնակցության հայտ է ներկայացրել և որի ցանկերում գրանցված են 40 և ավելի մասնակիցներ: Այս երեխաները մրցույթին մասնակցում են իրենց իսկ դպրոցում:
 - 3-12-րդ դասարանի աշակերտներ այն դպրոցից, որը մասնակցության հայտ է ներկայացրել, սակայն որի ցանկերում գրանցված են 5-ից ավել և 40-ից պակաս մասնակիցներ: Այս երեխաները մրցույթին մասնակցում են այլ դպրոցում, որի հետ իրենց դպրոցը նախապես պայմանավորվում է միանալու վերաբերյալ և նշում այդ մասին մասնակցության հայտում:
 - 3-12-րդ դասարանի աշակերտներ, որոնց դպրոցը մասնակցության հայտ չի ներկայացրել: Այս երեխաները կարող են իրենց նախաձեռնությամբ նախօրոք դիմել որևէ այլ դպրոցի, ստանալ այդ դպրոցի ղեկավարության թույլտվությունը, գրանցվել մասնակիցների ցանկում, տրամադրել վճարման անդորրագիրը և մրցույթի օրը ներկայանալ այդ դպրոց:

3. Մրցույթի անցկացումը

- 3.1. Հայաստանում և Արցախում մրցույթի պաշտոնական կազմակերպիչը «Այբ» կրթական հիմնադրամն է:
- 3.2. Մրցույթի կազմակերպման աշխատանքներում ներգրավված են «Այբ» կրթական հիմնադրամը, մարզային համակարգողները և մասնակից դպրոցները: Յուրաքանչյուր մասնակից դպրոց հենց ինքն է նշանակում **դպրոցի պատասխանատուին**, ով համակարգում է մրցույթի անցկացման աշխատանքներն անմիջապես դպրոցում:
- 3.3. Մրցույթն անցկացվում է տվյալ դպրոցում, եթե գրանցված մասնակիցների թիվը 40 և ավելի է: Եթե մասնակից աշակերտների թիվը ավել է 5-ից և պակաս 40-ից, ապա դպրոցը մրցույթին մասնակցում է՝ մրցույթի օրը միանալով մեկ այլ դպրոցի, որի հետ նախապես ձեռք է բերել համապատասխան պայմանավորվածություն և նշել այդ մասին մասնակցության հայտում: Եթե դպրոցում մասնակիցների թիվը պակաս է 5-ից, տվյալ դպրոցը մասնակցության հայտ ներկայացնել չի կարող:
- 3.4. Յուրաքանչյուր մասնակից երեխա (անկախ մրցույթի արդյունքներից) և մասնակից դպրոց (անկախ այն բանից՝ մրցույթն իրականացվել է նրանում, թե այլ դպրոցում) ստանում է **մասնակցության հավաստագիր**:
- 3.5. Դպրոցի պատասխանատուն մրցույթի մասին տեղեկացնում է աշակերտներին, գրանցում մասնակիցներին «Մասնակիցների ցանկ» հատուկ էլեկտրոնային նիշքում (file), հավաքագրում վճարման անդորրագրերը (բնօրինակները կամ պատճենները), ուղարկում «Մասնակիցների ցանկի» վերջնական տարբերակը kangaroo@ayb.am էլ. հասցեին: Այնուհետև պատասխանատուն կցում է «Մասնակիցների ցանկի» տպված տարբերակն ու վճարման անդորրագրերը դպրոցի մասնակցության հայտին և մինչև հայտարարված վերջնաժամկետը ներկայացնում «Այբ» կրթական հիմնադրամի կենտրոնական գրասենյակ, որտեղ և պատրաստվում են մրցույթի նյութերը:
- 3.6. Մրցույթը ողջ աշխարհում անցկացվում է նույն՝ մարտի երրորդ հինգշաբթի օրը: Հայաստանի դպրոցներում մրցույթը սկսվում է 12:00-14:00 ժամանակահատվածում: Մրցույթի օրվա առավոտյան ժամը 10:00-ից սկսած դպրոցի պատասխանատուն անձնագրով տարածքային կենտրոնից վերցնում է մրցույթի նյութերը: Մրցույթի խնդիրների թերթիկները տրվում են դպրոցի պատասխանատուին կնքված փակ ծրարով, որը պետք է բացվի **միայն մրցույթի մեկնարկի պահին՝ մասնակիցների ներկայությամբ**: Խնդիրները, պատասխանների լրացման թերթիկները և հուշանվերները պատրաստվում և դպրոցներին ուղարկվում են դպրոցի «Մրցույթի մասնակցության հայտում» նշվածից առնվազն 10%-ով ավելի քանակով՝ յուրաքանչյուր տարիքային խմբի համար: Այդ 10%-ի սահմաններում նախապես չգրանցված աշակերտները կարող են մրցույթին մասնակցել մրցույթի օրը վճարման անդորրագիրը դպրոցի պատասխանատուին տրամադրելուց հետո:
- 3.7. Այն դպրոցները, որոնք միավորվել են մրցույթի իրականացման համար, կստանան **մեկ (ընդհանուր) մրցութային փաթեթ**, որը կտրվի այն դպրոցի պատասխանատուին, որտեղ ֆիզիկապես իրականացվում է մրցույթը:
- 3.8. Այն դպրոցներին, որոնց տարածքային կենտրոնները գտնվում են ոչ իրենց համայնքում, կտրվի մրցութային փաթեթի ստացման ճանապարհաձախսի փոխհատուցում 3000 դրամի չափով: Փոխհատուցումը կփոխանցվի **դպրոցի բանկային հաշվեհամարին** մրցույթից հետո մեկուկես ամսվա ընթացքում: Դպրոցն իր բանկային տվյալները (բանկի անվանումն ու հաշվեհամարը) նշում է մրցույթի օրը պատասխանների թերթիկների ծրարի վրա փակցված արձանագրության մեջ: Սխալ նշված բանկային տվյալների համար «Այբ»-ը պատասխանատվություն չի կրում:

- 3.9. Մասնակիցներին պետք է նստեցնել մեկ սրահում կամ դահլիճում: Եթե դա անհնար է, ապա երեխաներին կարելի է նստեցնել մի քանի սրահում (դասասենյակում) այնպես, որ նույն սրահում լինեն տարբեր տարիքային խմբի մասնակիցներ, յուրաքանչյուր սրահում՝ առնվազն մեկական դիտորդ: **Հիշեցնենք, որ մրցույթի հեղինակությունն ու արդյունքների ճշտությունը կախված են մրցույթի անցկացման պատշաճությունից:**
- 3.10. Մրցույթի ժամանակ մասնակիցներին պետք է նստեցնել հնարավորինս ազատ (խիստ ցանկալի է առանձին-առանձին՝ յուրաքանչյուր սեղանի առաջ մեկ աշակերտ): Եթե դա անհնար է, ապա խորհուրդ է տրվում կողք կողքի նստեցնել տարբեր տարիքային խմբի երեխաների, ովքեր չունեն նույն առաջադրանքները: **Չի կարելի կողք կողքի նստեցնել հարակից տարիքային խմբերի երեխաների, օրինակ՝ 7-8-րդ դասարանցիներին՝ 5-6-րդ դասարանցիների կամ 9-10-րդ դասարանցիների հետ:**
- 3.11. Մրցույթի ժամանակ սեղաններին պետք է լինեն միայն «Կենգուրուի» խնդիրները, պատասխանների լրացման թերթիկը, գրիչ և, ցանկության դեպքում, սևագրի թերթիկ, որը պետք է լինի **մաքուր թուղթ:** Չի թույլատրվում որպես սևագիր օգտագործել տետր:
- 3.12. Մրցույթի ընթացքում **արգելվում է օգտագործել հաշվիչ, հեռախոս և հաշվողական այլ սարքեր:** Մրցույթի 75 րոպեների ընթացքում լռության պահպանումը պարտադիր է: **Հուշումները, արտագրությունները, միջամտությունները, խոսելն ու աղմկելը խստիվ արգելվում են:**
- 3.13. Մրցույթի սկզբում բոլոր մասնակիցներին բաժանվում են **հուշանվերները և պատասխանների լրացման թերթիկները:** Թերթիկի լրացման համար օգտագործել միայն կապույտ կամ սև գրիչ: Այլ գույնի գրիչ կամ մատիտ օգտագործել չի թույլատրվում:
- 3.14. Մրցույթի կանոնների բացատրության և պատասխանների լրացման թերթիկներում անձնական տվյալները գրանցելու համար նախատեսք մոտ 15 րոպե: Մրցույթի խնդիրների լուծման համար հատկացվում է ուղիղ **75 րոպե:** Այս ժամանակը հաշվարկվում է խնդիրների թերթիկները (թեստերը) երեխաներին բաժանելու պահից: Այսպիսով՝ մրցույթի անցկացման համար պահանջվում է մոտ 1 ժամ 30 րոպե: Մրցույթը դադարում պետք է մեկնարկի 12:00-14:00 ժամանակահատվածում:
- 3.15. Համոզվեք, որ բոլոր մասնակիցները գրել են անհրաժեշտ տվյալները պատասխանների լրացման թերթիկի վրա, և **միայն դրանից հետո բաժանեք խնդիրները:** Դպրոցի ծածկագիրը (այն կլինի նաև մրցութային փաթեթում) գրեք գրատախտակի վրա և խնդրեք երեխաներին այն ուշադիր արտագրել պատասխանների լրացման թերթիկի համապատասխան հատվածում: Բացի անուն-ազգանունից և դպրոցի ծածկագրից՝ պատասխանների լրացման թերթիկում երեխաները պետք է մուտքագրեն իրենց հերթական համարներն՝ ըստ մասնակիցների վերջնական ցանկի, որն ուղարկվել է «Այբ»-ի կողմից մրցութային փաթեթի հետ: **ԵԹԵ ԴՊՐՈՑԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ ԵՎ ԵՐԵՆԱՅԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՄԱՐԸ (ԸՍՏ ՑԱՆԿԻ) ՉԵՆ ՆՇՎՈՒՄ, ԱՊԱ ՀԱՄԱԿԱՐԳԻՉԸ ՉԻ ՀԱՍԿԱՆԱ, ԹԵ ՈՒՄ Է ՊԱՏԿԱՆՈՒՄ ՏՎՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԸ:** Միայն այս ամենից հետո, բոլոր մասնակիցների ներկայությամբ, բացեք խնդիրների ծրարը և ըստ տարիքային խմբերի բաժանեք խնդիրների թերթիկները:



խնդիրների թերթիկների (թեստերի) ծրարը բացվում է, և թերթիկները բաժանվում են միայն այն բանից հետո, որ բոլոր մասնակիցները լրացրել են անհրաժեշտ տվյալները պատասխանների լրացման թերթիկներում: Այս պահից հաշվարկվում է մրցույթի ժամանակը՝ 75 րոպե:

- 3.16. Խորհուրդ տվեք մասնակիցներին երկար կանգ չառնել մեկ խնդրի վրա, եթե դրան պատասխանել չի հաջողվում: Նպատակահարմար է անցնել հաջորդ խնդրին, ապա վերջում վերադառնալ չլուծված խնդրին:
- 3.17. Լուծելով խնդիրը՝ մասնակիցը «X»-ով նշում է («X» է դնում) տվյալ խնդրի համարին համապատասխանող սյունակում ընտրված պատասխանի վանդակը: **Պատասխանների**

թերթիկում ջնջում կամ որևէ նշում անելն արգելված է: Երեխան ունի հնարավորություն կատարելու առավելագույնը 3 ուղղում: Ուղղում անելու նպատակով աշակերտը դիմում է պատասխանատուին, ով բացատրում է երեխային, թե ինչպես է դա արվում: Ուղղումների համար պատասխանների լրացման թերթիկում նախատեսված է երեք լրացուցիչ դաշտ, որոնցում աշակերտը մուտքագրում է ուղղվող խնդրի համարը և նշում ընտրված պատասխանի տարբերակը: Եթե միևնույն խնդրի համար երեխան պատասխանել է երկու տեղ՝ և՛ ընդհանուր, և՛ ուղղումների դաշտում, ապա որպես վերջնական պատասխան ընդունվում է ուղղումների դաշտում նշվածը:

- 3.18. Յուրաքանչյուր խնդիր ունի պատասխանի հնարավոր հինգ տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ: Եթե պատասխանների լրացման թերթիկում որևէ խնդրի համար երեխան նշում չի անում կամ նշում է մեկից ավելի պատասխան, ապա խնդիրը համարվում է չլուծված:
- 3.19. Սկսվելուց ուղիղ 75 րոպե հետո մրցույթն ընդհատվում է, և պատասխանատուն հավաքում է պատասխանների լրացման թերթիկները: Թեստերը մնում են երեխաների մոտ: **Պատասխանների բոլոր թերթիկները և մասնակիցների վերջնական (ճշտված) ցանկերը անմիջապես փակվում են** համապատասխան ծրարի մեջ, որի վրա ստորագրում են պատասխանատուն, դպրոցից երկու դիտորդ, տնօրենը (կամ փոխտնօրենը), ընդհանուր թվով՝ 4 (չորս) հոգի, և կնքում դպրոցի կնիքով: Ծրարը **նույն օրը** դպրոցի պատասխանատուի կողմից հանձնվում է նույն տարածքային կենտրոն **մինչև ժամը 17:00**-ն:
- 3.20. Հանձնվող ծրարի մեջ պարտադիր ներառել նաև մասնակիցների ցանկը: Ցանկը պետք է ճշգրտվի մրցույթի փաստացի մասնակիցների տվյալներին համապատասխան:



Մասնակիցների ցանկերը և պատասխանների թերթիկները դրվում են մեկ ծրարում ու փակվում: Ուստի խստորեն խորհուրդ է տրվում ճշգրտել ցանկերը ոչ թե մրցույթի ավարտից հետո, այլ ընթացքում:

- 3.21. Մրցույթի կազմակերպման նպատակով միավորված դպրոցները զետեղում են պատասխանների թերթիկներն ու մասնակիցների ցանկերը մեկ ընդհանուր ծրարում:
- 3.22. Մրցույթի ավարտին **լրացվում է արձանագրությունը**, որը փակցված է պատասխանների լրացված թերթիկների համար նախատեսված ծրարի վրա:

4. Արդյունքների ամփոփում

- 4.1. Բոլոր մասնակիցների աշխատանքները տարածքային կենտրոններից ուղարկվում են «Այբ» կրթական հիմնադրամի գրասենյակ, որտեղ և իրականացվում է ստուգումը: Պատասխանների բոլոր թերթիկները մշակվում են տեսածրիչի (սկաներ) միջոցով և մուտքագրվում համակարգիչ, ապա հատուկ համակարգչային ծրագիրն իրականացնում է ստուգումը: Ստուգման արդյունքում ձևավորվում են ընդհանուր ցուցակներ՝ ըստ տարիքային խմբերի: Այդ ցուցակների հիման վրա կազմվում են հաշվետվություններ, որոնք հետագայում ուղարկվում են մասնակից դպրոցներին: **Յուրաքանչյուր դպրոց ստանում է հաշվետվություն միայն իր մասնակից աշակերտների արդյունքների մասին:** Բացի դրանից, յուրաքանչյուր մասնակից դպրոց ստանում է մասնակցության հավաստագիր:
- 4.2. Աշխատանքների ստուգումը տևում է առնվազն մեկ ամիս, որից հետո մոտ մեկ շաբաթվա ընթացքում կազմվում են հաշվետվությունները: «Այբ»-ն **իրավասու է հաշվի չառնելու այն աշխատանքները, որոնք ներկայացվել են հաստատված ժամկետից ուշ՝ առանց հիմնավոր պատճառի:**
- 4.3. Մրցույթի արդյունքների հավաստիությունն ու անկողմնակալությունը ապահովելու նպատակով և՛ «Այբ»-ը, և՛ դպրոցի պատասխանատուները վերահսկում են մրցույթի կանոնների պահպանումը:

- 4.4. Բազմաթիվ տարիների համաշխարհային փորձը հաստատում է, որ մրցույթի մասնակիցների ինքնուրույն աշխատելու դեպքում մասնակիցների տված պատասխանների (ինչպես ճիշտ, այնպես էլ սխալ) հաջորդականությունների ամբողջական համընկում ծայրահեղ հազվադեպ է լինում: Օրինակ՝ 100 000 մասնակիցներից տարեկան համընկնում է ոչ ավելի, քան մեկ-երկու աշակերտի աշխատանք, որոնք եղել են տարբեր դպրոցներից և թույլ են տվել միևնույն միայն մեկ սխալը: Երկու սխալի համընկման դեպքեր գրեթե չեն լինում, իսկ մեծ թվով սխալների համընկում գործնականորեն անհնար է: Հասկանալի է, որ որքան շատ են ընդհանուր սխալները, այնքան վստահ կարելի է պնդել, որ եղել են խախտումներ, այդ թվում արտագրումներ և հուշումներ:
- 4.5. Պատասխանների համակարգչային մշակումից հետո **կատարվում է դպրոցի միևնույն տարիքային խմբի բոլոր աշխատանքների համադրում**՝ համընկումների հայտնաբերման նպատակով: Արդյունքների ամփոփ հաշվետվություններում համընկնող աշխատանքների կողքին կատարվում է «արտագրության կասկած» նշումը:
- 4.6. Վերահսկողության և վերլուծության արդյունքում մրցույթի կանոնների կոպիտ խախտումների բացահայտման դեպքում «Այբ»-ն **իրավասու է որակագրկել** (հանել մասնակիցների ցանկից կամ չեղյալ համարել առանց որևէ փոխհատուցման) ինչպես առանձին մասնակիցների, այնպես էլ ողջ դպրոցի բոլոր մասնակիցների կամ նրա որևէ տարիքային խմբի աշխատանքները: Աշխատանքների այսպիսի որակագրկման կամ կանոնների կոպիտ խախտման վերաբերյալ «Այբ»-ը նամակ-նախագրուշացում է ուղարկում տվյալ դպրոցին՝ խնդրելով ձեռնարկել բոլոր միջոցները՝ կանոնների խախտումներն ապագայում բացառելու նպատակով: Երկու տարի անընդմեջ նամակ-նախագրուշացում ստանալու դեպքում «Այբ»-ը ստիպված կլինի մեկ տարով չթույլատրել տվյալ դպրոցին մասնակցել մրցույթին:



Խստորեն խորհուրդ է տրվում գերծ մնալ մրցույթի անցկացման կանոնների որևէ խախտումից՝ հնարավորություն տալով երեխաներին ինքնուրույն փորձել իրենց ուժերը: Հիշեք, որ «բարի ցանկությունները» կարող են «արջի ծառայություն» մատուցել. չէ՞ որ ավելի լավ է իրական արդյունքներով ոգևորվել, քան որակագրկված լինել:

- 4.7. Մինչ արդյունքների հրապարակումը կազմակերպիչները պարտավոր են հանդիպել հաղթողների հետ՝ պարզելու վերջիններիս արդյունքների իսկությունը: Արդյունքների հավաստիության կասկածի կամ մեծաթիվ հաղթողներ և/կամ լավագույն արդյունք արձանագրած մրցանակակիրներ ունենալու դեպքերում «Այբ» կրթական հիմնադրամն իրավասու է մրցույթի հաղթողների (մրցանակակիրների) հետ անցկացնել լրացուցիչ մրցույթ (թեստավորում, հարցազրույց, հանդիպում)՝ վերջնական հաղթողներին (մրցանակակիրներին) որոշելու համար:
- 4.8. Բոլոր աշխատանքները պահվելու են «Այբ» գրասենյակում մինչև ընթացիկ տարվա հունիսի 30-ը: Մինչև այդ պահն ընդունվում են բողոքարկման հայտեր: Բողոքարկում կարող է իրականացնել միայն դպրոցը՝ այն դեպքում, եթե մասնակցի անունը չկա հաշվետվությունում կամ եթե կասկածի տակ է դրվում ստուգման ճշտությունը: **Խնդիրների բովանդակության և/կամ պատասխանների տարբերակների ճիշտ կամ սխալ լինելու վերաբերյալ բողոքներ չեն ընդունվում:**
- 4.9. **Մասնակից դպրոցների արդյունքները չեն համեմատվում:** Մրցույթից մոտ մեկուկես ամիս հետո բոլոր դպրոցներին ուղարկվում են արդյունքների ամփոփ հաշվետվությունները, որոնցում նշվում է երեխայի վաստակած միավորների թիվը և նրա զբաղեցրած տեղը դպրոցում, մարզում, Հայաստանում և Արցախում: Հիշեցնում ենք՝ դպրոցը ստանում է տեղեկատվություն միայն իր մասնակից աշակերտների արդյունքների վերաբերյալ:

5. Մրցանակաբաշխություն

- 5.1. Բոլոր մասնակիցների, լավագույնների և հաղթողների մրցանակաբաշխությունը իրականացվում է մրցանակային ֆոնդից, որը ձևավորվում է մասնակցության վճարներից և հովանավորների միջոցներից: «Կենգուրուն» զանգվածային մրցույթ է, և մրցանակաբաշխությունը նույնպես զանգվածային է լինում: Բոլորի համար նախատեսված են հավաստագրեր ու փոքրիկ հուշանվերներ: Լավագույններին շնորհվում են պատվոգրեր և խրախուսական մրցանակներ: Մրցույթի հաղթողները ստանում են գլխավոր մրցանակ: Մասնակից դպրոցները ստանում են մասնակցության հավաստագրեր:
- 5.2. Գլխավոր մրցանակը իրենից ներկայացնում է արժեքավոր նվեր կամ «Կենգուրու առանց սահմանների» ընկերակցության անդամ որևէ երկրում կազմակերպվող ամառային ճամբարի ուղեգիր: Ուղեգիրը ներառում է ճամբարում մնալու բոլոր ծախսերը, ճանապարհածախսը, ապահովագրությունը և ելքի արտոնագիրը (վիզան): Ամառային ճամբարի ուղեգիրը որպես գլխավոր մրցանակ սահմանելը որոշում է «Այբ» կրթական հիմնադրամը՝ կախված տվյալ տարվա հաղթողների թվից, ամառային ճամբարների առաջարկից և տվյալ տարում Հայաստանին հատկացված տեղերի քանակից: Ամառային ճամբարների ուղեգրեր կարող են տրվել միայն տվյալ տարվա հունիսի 1-ի դրությամբ 12 տարեկանը լրացած հաղթողներին, ովքեր բավարար չափով տիրապետում են անգլերենին:

6. Մասնակցության վճար

- 6.1. Մրցույթի մասնակցության վճարը կազմում է 970 ՀՀ դրամ: Այդ գումարներն օգտագործվում են բացառապես կազմակերպչական աշխատանքների և մրցանակների համար:
- 6.2. Մասնակցել ցանկացողները վճարումները կատարում են Հայաստանում՝ «ՎՏԲ-Հայաստան» բանկում բացված 16044015767700 հաշվեհամարին կամ «ԹԵԼ-ՍԵԼ» տերմինալների միջոցով, իսկ Արցախում՝ «Արցախբանկ» ՓԲԸ-ում բացված 223171002460 հաշվեհամարին: Վճարում անելիս հայտնել վճարման նպատակը, երեխայի անուն-ազգանուն-հայրանունը, դասարանը, դպրոցի անվանումն ու համայնքը: **Անդորրագրերը կարող են դուրս գրվել ինչպես մեկ կամ մի քանի երեխայի անունով, այնպես էլ՝ ըստ խմբային ցանկերի:**
- 6.3. Մրցույթին մասնակցելու համար բանկում **վճարում անելը բավարար չէ.** աշակերտը պետք է անապայման **գրանցված լինի իր դպրոցի մասնակիցների ցանկում:**
- 6.4. Եթե երեխան չի մասնակցել մրցույթին (չկա դպրոցի վերջնական ցանկում, կամ չկա պատասխանների թերթիկը), ապա նա կարող է հետ պահանջել մասնակցության վճարը՝ դիմելով «Այբ» կրթական հիմնադրամ մրցույթի օրվանից հաշված **մեկ ամսվա ընթացքում:** Գումարները կվերադարձվեն բացառապես երեխայի ծնողին՝ վերջինիս դիմումի հիման վրա: Նշված ժամկետից հետո գումարները չեն վերադարձվում:

7. Ժամանակացույց և քայլերի հաջորդականություն

- 7.1. Մրցույթին մասնակցելու փաթեթ-իրավերը ստանալուց հետո դպրոցները մինչև **մասնակցության հայտի ներկայացման վերջնաժամկետը** նախապատրաստվում են մրցույթին հետևյալ կերպ.
- նշանակում են դպրոցում մրցույթի պատասխանատուին և ընտրում դիտորդներին.
 - դպրոցում փակցնում են տեղեկատվական պաստառը, իրազեկում երեխաներին մրցույթի և դրա անցկացման կարգի մասին.

- բազմացնում և երեխաներին բաժանում են բանկում վճարման կարգի հիշեցման թերթիկները, հիշեցնում նրանց վճարման անդորրագրերը դպրոց ներկայացնելու և դպրոցի ցանկում գրանցվելու վերջնաժամկետի մասին.
- «Մասնակիցների ցանկի» հատուկ ձևը բեռնում են www.kangaroo.am կայքից կամ, կապվելով «Այբ» կրթական հիմնադրամի հետ, ստանում էլփոստով: Ցանկը լրացվում է **բացառապես «Այբ»-ի տրամադրած էլեկտրոնային նիշքում (file)**, .xls ձևաչափով, Sylfaen տառատեսակով (Unicode): Նիշքն անվանվում է հետևյալ կերպ՝ «դպրոցի ծածկագիր.xls» (օրինակ՝ 1234567.xls) և ուղարկվում kangaroo@ayb.am էլեկտրոնային հասցեով մինչև հայտի ներկայացման վերջնաժամկետը:
- հավաքում են երեխաներից վճարման անդորրագրերը և նրանց գրանցում «Մասնակիցների ցանկում» մինչև հայտարարված վերջնաժամկետը:



Խնդրում ենք նկատի ունենալ, որ երեխաների վճարման անդորրագրերը դպրոց ներկայացնելու, դպրոցի ցանկում գրանցվելու վերջնաժամկետը և դպրոցի մասնակցության հայտը ներկայացնելու վերջնաժամկետը տարբեր ամսաթվեր են:

7.2. Մինչև **հայտի ներկայացման վերջնաժամկետը** դպրոցները փոստով պատվիրված նամակով ուղարկում են կամ բերում են «Այբ»-ի կենտրոնական գրասենյակ **հայտը**, որը ներառում է՝

- մրցույթի մասնակցության հայտի լրացված, ստորագրված և կնքված ձևը.
- «Մասնակիցների ցանկի» տպված տարբերակը. ցանկի էլեկտրոնային տարբերակը **պարտադիր ուղարկվում է kangaroo@ayb.am** էլ. հասցեին.
- յուրաքանչյուր երեխայի անունով դուրս գրված բանկային անդորրագրերի բնօրինակները կամ պատճենները:






Հայտը չներկայացնելու կամ ուշացնելու դեպքում դպրոցը **ՄՐՑՈՒՅԹԻՆ ՉԻ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ**: Հայտը հիմք է ծառայում դպրոցի մրցութային փաթեթը պատրաստելու համար:

7.3. **Մրցույթի օրվա ժամանակացույց**

- Դպրոցի պատասխանատուն իր անձնագրով առավոտյան ժամը 10:00-ից սկսած տարածքային կենտրոնից վերցնում է մրցութային փաթեթը:
- 12:00–14:00 ժամանակահատվածում դպրոցը պատրաստ է լինում սկսելու մրցույթը. սրահը (դասասենյակը) պատրաստ է, երեխաները նստած են, դիտորդները գիտեն իրենց պարտականությունները:
- Երբ ամեն ինչ պատրաստ է, մրցույթը մեկնարկում է. բոլոր մասնակիցներին բաժանվում են պատասխանների լրացման թերթիկներն ու հուշանվերները և բացատրվում են կանոնները:
- Պատասխանատուն բացատրում է պատասխանների թերթիկի վրա անձնական տվյալների լրացման կարգը և հետևում, որ բոլոր երեխաները լրացնեն դրանք: Պատասխանատուն երեխաներին հայտնում է դպրոցի ծածկագիրը և յուրաքանչյուրի հերթական համարը՝ ըստ մրցութային փաթեթում ներառված «Մասնակիցների ցանկի»:
- Անձնական տվյալները գրանցելուց հետո միայն, **մասնակիցների ներկայությամբ, բացվում է խնդիրներով ծրարը**, և խնդիրների տարբերակները բաժանվում են երեխաներին: Այս պահից հաշվարկվում է մրցույթի ժամանակը՝ 75 րոպե:
- Ժամանակի լրանալուց հետո հավաքվում են պատասխանների լրացված թերթիկները և մասնակիցների ցանկերի հետ միասին անմիջապես դրվում համապատասխան ծրարի մեջ, փակվում և կնքվում:

- Կազմվում է պատասխանների թերթիկների ծրարի վրա փակցված արձանագրությունը: Ծրարը **նույն օրը հանձնվում է նույն տարածքային կենտրոն** մինչև 17:00-ն:
- 7.4. Մրցույթից մոտ երկու ամիս հետո դպրոցին ուղարկվում է իր աշակերտների արդյունքների հաշվետվությունը: Դրանից հետո տեղի են ունենում մրցանակաբաշխության արարողությունները, որի մանրամասները լրացուցիչ հայտարարվում են:
- 7.5. Բողոքարկումների դիմումները (ներկայացվում են դպրոցներից) ընդունվում են «Այբ» կրթական հիմնադրամում մինչև հունիսի 30-ը:



 ք.Երևան 0009, Կորյունի 19ա, 9-րդ հարկ
 (010) 54-37-07, (093) 01-08-63
 Էլփոստ՝ kangaroo@ayb.am